Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2025 թվականի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 8701 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 2871 մտից, 2004 ելից, 3826 ներքին:

2025 թվականի առաջին եռամսյակում ստացվել է 175 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 141 քաղաքացի: 137 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 5-ինը՝ մերժվել է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 6 քաղաքացի, բոլոր 6 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 12 դիմում է ստացվել, ստացված 12 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 11 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 11 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 3 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմումներ չեն ներկայացվել:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 3 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 12 դիմում: